



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԾԱՌԱԽԵՐ ԳՈՐԿԻՑ

Չ Ա. Ռ Ա Ճ. Ճ ի

Թարգմ. Ա. Դ Ա Կ Ա Բ Ա Յ Ա Յ Ա Ն

891.71
4 - 83

ELOS RAM 11

ՄԱԿԱՐԴԱՎԱՐ ԳՈՐԾՎԻՑ

27 AUG 2006

25 NOV 2010

♀ U P U x x h

Թարգմ. ԱՐԵՍԿ ԱԹԱՅԵԱՆ

Ա-ՊԵՏԵՐԲՈՒԻՐԳ

«ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ»

21 MAR 2013

10768

9 - 83
2005 00A TS

OTOS VON 35

Дозвол. Ценз. С-Петербургъ, 18 Ноября 1903 г.

„Пушкинская Скоропечатня“, Лештуковъ, 4.



237-89

ԶԱՐԱԾԱՀԻ



«Ն-ի Կրագրի» խմբագրատան մեծ լուսաւոր սենեակով չղայնօրէն վազվզում էր յուղւած, զայրացած խմբագիրը և ձեռներում ճճրթելով հրատարակութեան նոր լըս տեսած համարը՝ կտրուկ-կտրուկ զոռու ծուհայհոյում էր։ Դա մի փոքրիկ անձնաւորութիւն էր՝ սուր ու նիշար գէմքով, զարդարուած միրուբով ու ոսկի ակնոյներով։ Մոխրագյն անդրավարակը հագած բարակ ոտիկներով բարձր թրիթրիսկացնելով՝ նա պտտւում էր հապտաւում երկար սեղանի մօտ, որ դրւած էր սենեակի մշշտեղը և վրան թափթափած ճիլտւած թղթեր, սրբագրական սիւնեակներ և ձեռագրերի կտորներ։ Սեղանի մօտ, մի ձեռով նրա վրայ կթռնած, իսկ միւսով ճակատը սրբելով, կանգնած էր հրատարակիչը—երկար լիք-լիք միջին տա-

րիքով մի շիկահեր մարդ, ձերմասկ դւարիթ դէմ-քին արհամարհական նուրբ ժպիտ՝ հետեւում էր խմբագրին ուրախ, պայծառ աչքերով: Մետրանպաժը (աւագ զրաշարը), դէղնած դէմքով և ներս ընկած կրծքով մի կոպիտ մարդ, կեղտուա և հասակին ոչ համաչափ երկար կինամոնագյն սերթուկով, երկչուութեամբ կպել էր պատին: Նա յօնքերը վեր էր բարձրացնում և աչքերը չուռմ առաստաղին, կարծես թէ մի բան էր յիշում կամ խորհում, և մի բոլէ յետոյ հիասթափ վեր էր քաշում քիթը և ախուր զլուխը կախում կրծքին: Դրան մէջ ցցւած էր խմբագրական ցրիչ դէմքը. շարունակ նրան հրելով մտնում ու նորից անյայտանում էին ինչոր մարդիկ մտազրադ և դժոհ դէմքերով:

— Խմբագրի ձայնը—չար, զրգուած և հրնչուն, երեմն բարձրանում էր մինչև ծկլթոց և հրատարակին ստիպում էր դէմքը կնճռուաել, իսկ մետրանպաժին՝ վախեցած վեր թռչել: — Չէ, այս այնպիսի՝ ստորաքարշութիւն է: Ես քրէական դատ կը բանամ այդ դարշելու դէմ... Արբագրիչը եկել է: Գրողը տանի, — Ես հարցնում եմ—եկել է սրբագրիչը: Հաւաքէլ բոլոր զրաշարներին այստեղ: Ասացի՞ք: Չէ, դուք մէկ երեակայեցէք, թէ ի՞նչ կը լինի այժմ:

բոլոր լրագրերը ծատի վրայ կ'առնեն մեղ... խայտառ-ռակիութիւն: Ողջ նուսասահն-ը մէկ... Ես չեմ ներիլ այդ դարշելուն:

Եւ լրագրերը բռնած ձեռքը բարձրացնելով դէպի զլուխը՝ խմբագրիրը տեղնուտեղը կծկր-ւեց, կարծես յանկանալով լրագրեր փաթաթել զլուխը և այդպիսով պաշտպանել նրան սպասող խայտառակիութիւնից:

— Դուք նախ և առաջ դաեւք նրան...— սառը կերպով ժալապալով խորհուրդ տւաւ հրատարակիւը:

— Կը զը-դտնեմ: Կը զը-դտնեմ,—աչքերը շողզողացրեց խմբագրիր՝ նորից սկսելով վաղել, և կրծքին սեղմելով լրագրիր՝ սկսեց անխնայ զզզել այն:— Կը դտնեմ և նրա ճաշը կեփեմ... Այս սրբագրիչն ինչ եղաւ: Համար աշամ... Գէ, խնդրեմ շնորհ բերեք, յարգելի՛ պարոնները: Հըմ... արձակ զօրաբաժինների հեղ հրամանաւարներ... Համար աշամ: Անցէք խնդրեմ... այ այդպէս:

Մէկը միւսի յետեից գահիձն էին մըտնում գրաշարները: Նրանք արդէն դիտեին, թէ նում գրաշարները: Նրանք արդէն դիտեին, թէ ինչ կայ, և նրանցից իւրաքանչիւրը պատրաստւում էր ստանձնելու մեղադրւողի վերը, ուստի նրանք բոլորն ել իրանց կեղաստ, արձային փոշով թաթախւած դէմքերին արտադային փոշով թաթախւած դէմքերին և մի յայտում էին կատարեալ անշարժութիւն և մի

տեսակ փայտի անդորրութիւն։ Նրանք խտութեամբ խմբւեցին դաշլճի մի անկիւնում։ Խըմբագիրը կանգ առաւ նրանց առաջ՝ լրագիրը բռնած ձեռը մեջքին գնելով։ Նա նրանցից հասակով փոքր էր, ուստի ստիպւած եղաւ զլուխը վեր բարձրացնել, որպէսզի նայէ նրանց երեսներին։ Նա այդ շարժումն արաւ չափազանց արագ, և ակնոցները յանկարծ թռան ճակատին։ կարծելով՝ թէ նրանք ընկնում են, նա օդի մէջ ձեռքը շարժեց նրանց բռնելու, բայց այդ ժամանակ նրանք նորից ընկան քթարձատին։

— Դրո՞ւ ձեղ...—կրծտացրեց նա ատամները։

Գրաշաբների աղոտ դէմքերին ուրախ ժպիտներ փայլեցին։ Մէկը խուլ ծիծաղեց։

— Ես ձեղ այստեղ եմ կանչել ոչ նրա համար, որ դուք ինձ ձեր ատամները ցցց տաք, զայրացած դուաց խմբագիրը դունատելով։ — Կարծեմ բաւականաչափ խայտառակել էք թերթը... Եթէ ձեր մէջ կայ մի ազնիւ մարդ, որը հասկանում է, թէ ինչ է լրագիր, մամուլ... նա կասէ, թէ ով է սարքել այդ... Առաջնորդող յօդւածում...—Խմբագիրն սկսեց չղայնորին շուռումուռ տալ լրագիրը։

— Ախր ի՞նչ է եղել է, — եկաւ մի ձայն,

որի մէջ ոչինչ չէր լսուում, բացի պարզ հետաքրքրութիւնից։

— Ա՛: Դուք չը գիտէ՞ք: դէ, ուրեմն համեցէք... ահա...»

«Մէր գործարանային օրէնսդրութիւնը մամուլին միշտ ծառայել է իբրև առարկայ տաք վիճաբանութեան... այսինքն անմիտ յիմարութեան և անհեթեթութեան ասման...» Ահա, դուք գո՞հ էք։ Զի՞ բարեհածիլ նա, ով աւելացրել է այս «ասման»...—և զլխաւորը—ասման. ինչպէս զրագէտ է սրամիտ. — է, ձեզնից ո՞վ է այս «անմիտ յիմարութեան և անհեթեթութեան» հեղինակը...»

— Յօդւածն ումն է որ։ Զե՞րն է։ Է, ուրեմն գո՞ւք էլ այն բոլորի հեղինակն էք, ինչ ոք նրանում դուրս է տւած, — հնչեց նոյն հանդարտ ձայնը, որ առաջ էլ էր հարցրել խմբագրին։

Սյդ յանդզնութիւն էր, և բոլորն ակածայ ենթազրեցին, որ այդ գէպքի հերոսը դանւած է։ Դաշլիճում մի շարժում ընկաւ. հրատարակիչը մօտ եկաւ խմբին, խմբագիրը ուսների ծայրերի վրայ բարձրացաւ՝ կամենալով գրաշաբների զլխների վրայով նայել խօսողի գէմքին։ Գրաշաբները մի կողմ քաշւեցին։ Խմբագրի առաջ կանգնած էր մի թիկնաւէտ մարդ,

կապոյտ բլուզով, չեչոտ գէմքով և ձախ քունքի
վրայ դէպի վեր հիսւող մաղի ոլորներով։ Նա
կանգնած էր՝ ձեռները խրած անդրվարտիքի
զրապանները, և խմբագրի վրայ անստարերու-
թեամբ յառած գորշ չար աճքերը՝ թեթե ժպ-
տում էր գանգուր շէկ միրուքի միջից։ Բոլորը
նրան էին նայում։ Հրատարակիչը խստու-
թեամբ կիտած յօնքերը, խմբագրի զարման-
քով և բարկութեամբ, մետրանպամբ—ծիծաղը
բռնած ժպտուկի։ Գրաշարների դէմքերն ար-
տայպտում էին և ոչ աչող թագյրած բաւա-
կանութիւն, և վախ, և հետաքրքրութիւն...

— Այդ... հէսց գո՞ւք էք, — հարցրեց վեր-
շապէս խմբագիրը՝ մատանանիշ անելով չեչոտ
դրաշարին, և բաղմախորհուրդ կերպով սեղմեց
շրթունքները։

— Ես եմ...—պատասխանեց նա՝ քմծիծա-
դելով շատ պարզօրէն և վիրաւորիկ կերպով։

— Ա. ա... շատ զեղեցիկ։ Ուրեմն այդ
գո՞ւք էք։ Իէ ինչի՞ համար էք գուք աւելցրել,
թոյլ տւէք իմանալ...

— Բայց միթէ՞ ես ասացի, որ ես եմ
աւելցրել, — և զրաշարը նայեց իր ընկեր-
ներին։

— Դա նա է, ճշմարիտ, Միշտիլ Պաւլո-
վիչ—դարձաւ մետրանպամբ խմբագրին։

— Է, որ ես եմ, ուրեմն ես եմ,—մի պար-
զամտութեամբ համաձայնեց զրաշարը և ձեռքը
թափ տալով՝ նորից ժպտաց։

Կրկին լոեցին բոլորը։ Ոչ ոք չէր սպասում
այդպիսի շուտափոյթ և խաղաղ խօստավանու-
թիւն, և այդ բոլորի վրայ ազգեց իրեւ ան-
սպասելի բան։ Մինչև անգամ խմբագրի զայ-
րոյթը տեղի տւառ մի բոպէ զարմանքի։ Զե-
չոտի շուրջը գտնւող տարածութիւնը լայնա-
ցաւ, մետրանպամբն արագ հեռացաւ սեղանի
մօտ, զրաշարները մի կողմ քաշւեցին...

— Դու այդ դիտմամբ ես արել, որոշ
նպատակնիվ, այնպէս չէ, հարցրեց հրատա-
րակիչը ժպտալով և չեչոտին զննելով իր կլոր
աչքերով։

— Հաճեցէք պատասխանել, — գոռաց խմ-
բագիրը՝ ճիլտւած թերթը թափ տալով։

— Մի՛ գոռաք... չեմ վախենում։ Շատերն
են վրաս դոռացել, բայց անօգնուտ. — և զրա-
շարի աճքերում շօղաց արի, անսամօթ կրակ։ —
Իսկ է... — շարունակեց նա՝ մի ոտից միւս ոտի
վրայ ծանրանալով և դառնալով արդէն հրա-
տարակչին։ — Էդ ես եմ զիտմամբ խօսք աւել-
ցրել...

— Լսում էք, — դարձաւ խմբագիրը ներ-
կայ եղողներին։

— Իսկապէս դու այդ ի՞նչ բանի վրայ ես,
սատանի՝ Ճուտ! — կատաղեց յանկարծ հրատա-
րակիչը: — Դու հասկանում ես արդեօք, թէ ինձ
որքան ֆաս պատճառեցիր:

— Չեղ հօ ոչինչ... դեռ՝ կարծեմ հատով
վաճառումն աւելցրել եմ: Բայց այ պարոն
խմբազրին — իսկապէս... շատ էլ հագելի չէ էս-
պիսի մի խաղ:

Խմբազրիր կարծես քարացել էր բարկու-
թիւնից. նու կանգնել էր այդ անվրդով և չար
մարդու առաջ և լուս շղացնում էր աչքերը՝
իրան յուղող զգացմունքներն արտայայտելու
խօսքեր չգտնելով:

— Բայց, եղբայր, չէ՞ որ այս բանի հա-
մար բանկ բուրդ կդառնաայ!... — չարախնդու-
թեամբ ծոր առաւ հրատարակիչը և յանկարծ
մեղմանալով՝ ծնկներին խփեց:

Իսկապէս նա զոհ էր և այդ դիպուածից,
և բանւորի յանդուղն պատասխանից. խմբա-
զրիր նրան նայում էր մի տեսակ մեծամարդէն՝
չաշխատելով թագյնել իր մտաւոր առաւելու-
թեան մասին ունեցած զիտակյութիւնը, և
ահա այժմ նա, այդ ինքնասէր և ինքնավատահ
չնորհիւ:

— Քո այդ յանդութեան համար մենք

քեզ վոխարէնը կհատուցանենք, հոգեակս, —
աւելցրեց նա:

Գիտեմ, որ չեք ներիլ՝ իհարկէ, համաձայ-
նեց զրաշարը:

Այս տօնը և այս խօսքերը նորից աղղե-
ցութիւն գործեցին: Գրաշարներն իրար երեսի
նայեցին, մեարանպամբ յօնքերը բարձրացրեց
և մի տեսակ կուչ եկաւ, խմբազրը յետ քաշ-
ւեց սեղանի մօս և ձեռները նրան յենելով, աւելի
շփոթւած և վիրաւորւած, քան զայրացած, աչ-
քերը յառած՝ նայում էր իր թշնամուն:

Անունդ ի՞նչ է հարցրեց հրատարակիչը՝
զրապանից հանելով յուշատեարը:

— Նիկօլիկա Գվօղգեվ, Վասիլիյ Իվանօվիչ,
— արագ յայտարարեց մետրանպամբ:

— Այ գու, Մատնիչ Յուդայի լակէյ, լոիր,
քանի որ քեզ չեն հարցնում, — խստութեամբ
նայելով մետրանպամբն՝ ասաց զրաշարը: — Ես
ինքս լեզու ունիմ, ես ինքս ինձ տեղ կպատաս-
խանեմ... իմ անունն է Նիկօլայ Սեմյօնօվիչ
Գվօղգեվ: Բնակւում եմ...

— Կը գտնե՞նք, — խոստացաւ խմբազրը:
— Իսկ հիմա չհաննամը կորիր: Բոլըրդ գնացէք...

Բարձրաձայն թխկթխկացնելով՝ զրաշար-
ները լուս դուրս եկան: Գվօղգեվը բոլորից վերջն
էր գնում:

— Կայց... սպասիր... ասաց խմբագիրը հանդարտ, բայց որոշ և ձեռք մեկնեց Գվօղգեվի յետեից:

Գվօղգեվը շուռ եկաւ գէպի նա, ծցլ շարժումով յենւեց դրան կընկին և միրուքը ոլորէլով՝ իր յանդուճն աջքերը յառեց խմբագրի դէմքին:

— Տես ինչ եմ ասում քեզ,— սկսեց խրմբագիրը: Նա ուզում էր անվրդով լինել, բայց չէր աջողւում. նրա ձայնը բաց էր ընկնում, աղմուկի էր փոխւում: — Դու խոստվանւեցիր... որ այդ խայտառակութիւնն անելիս... ի նկատի ես ունեցել ինձ: Այսուհետեւ նշանակում է, այս նում եմ քեզ—ինչո՞ւ համար: Դու հասկանո՞ւմ այդ: Կարո՞ղ ես ինձ պատասխանել:

Գվօղգեվը թօթւեց ուսերը, շրթունքները ծռեց և զլուխը կախելով՝ մի բռպէաչափ լուս մնաց: Հրատարակին անհամբերութեամբ թխկթխկայնում էր ոտք, մետքանպաժը վիզը երկարացրել էր, իսկ խմբագիրը կրծուում էր բեղերը և շղայնօրէն կոտրատում մասները: Բոլորն սպասում էին:

— Ես, որ ուզում էք կասեմ... Միայն՝ ինչ պէս ես մի անկիրթ մարդ, զուցէ որ անհասկանի լինի... Դէ՛չ, էն ժամանակ ներողութիւն

կանէք!... Այդ թէ բանն ինչպէս է: Դուք գրում էք զանազան յօդւածներ, բոլորին խորհուրդ էք տալիս մարդասիրութիւն և այլ այսպիսի բաններ... Չեմ կարողանում ես ձեղ էս բոլորը մանրամասնօրէն ասել—լաւ զիր չղիտեմ... Դուք՝ ասենք՝ ինքներդ զիտէք, թէ ինչի մասին էք ամեն օր գրուառման... Է, դէ ես էլ կարդում եմ էդ ձեր յօդւածները: Դուք մեզ բանւորներիս մասին էք ասում—խօսում... Ես էլ բոլորը կարդում եմ... Ու զզւում եմ ես կարդալուց, որովհետեւ էդ բոլորը դաաարկ բաներ են միայն: Անտամօթութեան խօսքեր են միայն, Միարի Պաւլովիչ... որովհետեւ զուք գրում էք—մի զուփիր, բայց ձեր տպարանում ինչեր են լինում: Կիրեակովն անցեալ շաբաթ բանեց երեք օր ու կէս, աշխատեց տասն երկու աբասի և հիւանդացաւ: Կինը գալիս է գրասենեակը փաղի համար, բայց կառավարին ասում է նրան, որ ոչ թէ նրան պէտք է փող տալ, այլ նրանից պէտք է մի բուրլի քսան ստանալ—տուգանք: Էս էլ քեզ մի զուփիր: Դուք ինչո՞ւ էս կարդերի մասին չէք զրում: Եւ ինչպէս կառավարիչը հաջում է ու աշկերտներին քոթկում ամեն մի զատարկ բանի համար... Դուք սաքէք կարող զրել, որովհետեւ հէսց զուք ինքներդ էլ էս «քաղաքականութիւնն» էք բանեց-

նում... Գրում էք, որ մարդիկ վաս են ապ-
րում աշխարհը ում, և նրա համար էլ, ես ձեզ
կասեմ, դուք էս բոլորը զրում, որովհետեւ ու-
րիշ ոչինչ անել չէք կարող: Պրծաւ գնաց... Ուս-
տի և դուք ձեր թթի տակ ոչ մի գաղանու-
թիւն չէք տեսնում, բայց թիւրքական գաղա-
նութիւնները շատ լաւ պատմում էք: Միթէ
էդ գատարկ բաներ չեն—ձեր էդ յօդւածները:
Ես գաղուց էի ուզում՝ ձեր ամօթի համար՝
ձեր յօդւածների մէջ մտցնել ձշմարիտ խօսքեր:
Էդ զեռ քիչ է:

Գվոզգեվս իրան հերոս էր զգում: Նա
հսկարտ դուրս ցցեց կուրծքը, զլուխը բարձր
բռնեց և իր յաղթութեան հրճուանքը չժագց-
նելով՝ անթարթ նայում էր խմբագրին: Իսկ
խմբագրին ամուր սեղմել էր սեղանին՝ ձեռ-
ներով պինդ բռնած այն, ետ թեքւել և մերթ
գունատում էր, մերթ կարմրում և միշտ ժրապ-
տում էր արհամարհանքով ու շփոթութեամբ,
չար և հիւանդու: Նրա լայն բայցւած աչքերը
յաձախ թարթում էին:

— Սօյիալիստ է,— վախով ու հետաքր-
քրութեամբ հարցրեց հրատարակիլը՝ կիսա-
ձայն դիմելով խմբագրին:

Նա հիւանդու ժպատաց, բայց ոչինչ չպա-
տասխանեց և զլուխը թէքեց:

Մետրանապամբ գնաց լուսամուտի մօտ, ուր
դրւած էր ահազին ֆիլոդենդրոնը մէջը մի փայ-
տի աման, որ սենեեակի յատակին տարածել էր
ստւերը, ամանի յետեւ կանգնեց և այնտեղից
նայում էր բոլորի վրայ փոքրիկ, ու ու շար-
ժուն՝ ինչպէս մկան՝ աչքերով: Նրանցում մի
տեսակ անհամբեր ակնկալութիւն կար, և եր-
բեմն վառւում էր ուրախ կրակ: Հրատարակիչը
նայում էր խմբագրին: Վերջինս զգաց այդ,
զլուխը բարձրացրեց և մի անհանգիստ փայլ
աչքերում, չղային գող դէմքին՝ գոռաց հեռա-
ցող Գվոզգեվս յետեկից.

— Սպասեցէք... կացէք: Դուք ինձ վիրա-
ւորել էք: Բայց զուք իրաւունք չունէք... ևս
կարծում եմ, որ այդ զգում էք: Ես շնորհա-
կալ եմ ձեզանից ձեր... պարզ խօսելուն համար,
բայց կրկնում եմ...

Նա ուզում էր հեղնանքով խօսել, բայց
հեղնանքի տեղ նրա խօսքերում հնչում էր ինչ
որ անգոյն և կեղծ մի բան, և նա դադար ա-
ռաւ՝ ցանկանալով պատրաստել դիմագրու-
թեան, որ արժան էր և իրան, և այդ
դատաւորին, որի՝ իրան—խմբագրին դատե-
լու իրաւունքի մասին նա զեռ երբէք չէր
մտածել:

— Հասկանալի՞ է, — զլուխն օրօրեց Գվոզ-

գեվր:—Միայն նա է արդար, ով կարող է շատ
բան ասել:

Եւ կանգնելով գրան մէջ՝ նա շուրջը նայեց
դէմքի մի այնպիսի արայայտութեամբ, որը
պարզ ցցց էր տալիս նրա անհամբերութիւնը
չեռանալու այդանդից:

—Ո՞չ կացէք,—ձայնը բարձրացնելով և
ձեռք վեր ուղղելով յայտարարեց խմբագիրը:—
Դուք ինձ վրայ մեղադրանք էք բարդում, բայց
դրանից առաջ ինքնակամ պատժել էք ինձ՝ իբր
թէ ձեր առաջ ունեցած մեղքիս համար... Ես
իրաւունք ունեմ պաշտպանւելու և ես ձեզ
խնդրում եմ լրել...

—Ախր դուք ինձ հետ ի՞նչ գործ ունեք:—
Դուք հրատարակչի թէմ պաշտպանւեցէք, եթէ
հարկաւոր է: Իսկ ինձ հետ ի՞նչ պէտք է խօ-
սեք: Զեզ վիրաւորել եմ, ուրեմն հաշտարարի
մօտ քաշ տւեք էլի: Թէ չէ—ի՞նչ պաշտպան-
ւել: Մնաք բարով:—Նա կրնկի վրայ շուռ եկաւ
և ձեռները մէջին դնելով՝ գուրս գնաց դահ-
լձից:

Նա հագած էր մեծ կրունկներով ծանր
կօշիկներ, նրանցով բարձր թիվթիվացնում էր,
և նրա քայլերը խուլ արձագանք էին տալիս
խմբագրատան մեծ, սրահանձան սենեակում:

—Էս էլ քեզ պատմութիւն աշխարհա-

զրութեան հետ,—բայցագանչեց հրատարակիչը,
երբ Գվօղդեմն իր յետեից շրխկացրեց գուռը:

—Վասիլիյ Խվանօվիչ ես բանից խարար
չեմ...—խօսեց մետրանպաժը՝ յանցապարտօրէն
ձեռները ես տանելով, և զգոյշ մանր քայլերով
մօտեցաւ հրատարակին:—Ես կարգաւորում եմ
շարւածքը և իսկի չեմ կարող իմանալ, թէ ա-
ռաջս ինչ է խոթում օրապահը: Ես ըստ ովզ զի-
շնըրը ոտի վրայ... Էստեղ եմ գտնուում, իսկ տանը
կինս հիւանդ է, երեխաներիս նայող չկայ...
երեքն են... Ես՝ կարելի է ասել՝ արինս քա-
ծում ևմ ամսական երեսուն բուրդու համար...
Իսկ ֆէօդօր Պավլօվիչին, երբ նրանք վարձում
էին Գվօղդեմին, ես ասել եմ. «Ֆէօդօր Պաւ-
լօվիչ ասացի, ես Նիկոլին գեռ երեխայ ժա-
մանակից եմ ճանաչում և պէտք է ձեզ ասեմ,
որ Նիկոլիան անհանդիսա մարդ է և գող, ա-
ռանց խղճի մարդ է: Նրան մինչև անդամ հաշ-
տարարի մօտ գատել են, ասեմ մինչեւ իսկ բանտ
է նստել...»

—Ինչի՞ համար է նստել,—մտազբաղ հարց-
րեց խմբագիրը՝ առանց նայելու պատմողին:

—Աղաւնիների համարը... այսինքն՝ ոչ
թէ աղաւնիների համար, այլ փականներ կոտ-
րելու համար: Եօթ աղաւնատաների փականներ
է կոտրել մի զիշերը... և բոլոր հաւերին ա-

զաառւթիւն է տւել—բոլոր թռչուններին ցրել է-ը։ Իմ մի շուխտ գորշագոյն աղաւնիներն ել հէնց էսպէս էլ կորան։ Նատ հազւագիւա թրուշուններ էին։

—Գողացէլ է, —հետաքրքրութեամբ տեղեկացաւ հրատարակիչը։

—Ոչ նա էդպիսի բաներ չի անում։ Գողութեան համար էլ է զատի ենթարկուել, բայց արդարացրել են։ Հէնց էնալէս—չարածձի է... Բայց թողեց թռչուններին, ել ոչինչ պէտք չի նրան, և ծիծաղում է մեզ—թռչուն սիրողներիս վրայ... Նրանք անդամ են ծեծել։ Մի անդամ ծեծից յետոյ մինչեւ իսկ հիւանդանոց ընկաւ.,. Բայց երբ էնտեղից գուրս եկաւ, իմ սանամօր վառարանը սատանաներ դժեց։

—Սատանանե՞ր,—զարմացաւ հրատարակիչը։

—Ի՞նչ անմտութիւն,—ուսերը թօթւեց խմբագիրը՝ ճակատը կնճռելով և նորից շրթունքները կծոտելով՝ մտքի տակ ընկաւ։

—Սա բոլորովին ճշմարիտ է, միայն էնալէս չասացի, —վիրաւորեց մետրանպամբ։ —Նա, դիտեք, վառարանագործ է, էղ նիկօլկան։ Նա ամեն բան զլուխ է բերում. վիճագրութիւնից բան հասկանում է, փորագրիչէ, շրանցք շինող էլ է եղել... Եւ ահա սանամերս—նա սե-

փական տուն ունի, նա հրդեորական ծագումից է—նրան վարձեց վառարանը վերաշինելու։ Է, նա ամեն բան շինեց, ինչպէս հարկաւորն էր, միայն թէ էղ անպիտաանը վառարանի պատի մէջ էր դրել մնդկով և ասեղներով լցրած մի շիշ... և կի մի ինչոր բան էլ է դրւում էնտեղ։ Դրանից առաջանում է մի հնչիւն—էնալէս մի տեսակ, դիտեք, կարծեք անքոյ կամ հառաջանք լինի, ու էղ ժամանակ ասում են —տունը սատանայ է մտել։ Հէնց որ վառարանը վառեցիր, մէկ էլ տեսար մնդիկը տաքացաւ շշում և սկսեց դէս-դէն թափառել։ Իսկ ասեղները չանգուտում են շիշը, կարծես մէկը ատամները կրծտացնելիս լինի։ Բայցի ասեղներից էլի զանազան տեսակ երկաթի կտորտանքներ են դնում մնդկի մէջ, նրանք էլ են զանազան ձայներ հանում, —ասեղը չոկ տեսակ, մեխը չոկ տեսակ, և գուրս է զալիս մի տեսակ դիւական երաժշառութիւն... Սանամերս մինչեւ անդամ ուզում էր տունը ծախել, բայց ոչ ոք չէ առնում, —դեերի հետ ովկ կ'ապրի։ Երեք մաղթանք է կատարել տւել չըօրհնէքով —բան չի դառնում։ Լայ ու կոծ է անում կինը, հարսնացու աղջիկ ունի, մօտ հարիւր զլուխ հաւ ունի, երկու կովի լաւ անտեսութիւն... բայց այդ գեերն ամեն բան փչացնում

Էս: Ենքա՞ն դէս ընկաւ, դէս ընկաւ, որ մարդու խեղձը գալիս էր նրան նայելիս: Հէնց նիկօլիկան էլ նրան փրկեց՝ կարելի է ասել: Տուր, ասում է, յիսուն մանէթ—դեերին հալածեմ: Նա առաջ մի քսանչնդանոց տւաւ, և յետոյ—երբ նիկօլիկան հանեց շիշը, և նա հասկացաւ բանը—էլ մնացածը ըստ տւաւ: Շատ խելօք կին է, ուզում էր դանդասւել, բայց ետկացրին... Վերջապէս այդ նիկօլիկան շատ օյինքազութիւններ դիտէ:

—Եւ միայն այդ գւարճալի «օյինքազութիւնների» պատճառով ես վաղւանից պէտք է տուժեմ: Ե՞ս,—զղայնօրէն բացագանէց խրմբագիրը և տեղից ցատկելով՝ նորից սկսեց սենեակովը վազգզել:—Օ, Աստւած իմ: Որքան անմիտ, կոսիտ, սաոր է այս բոլորը...

—Է-է, գուք կլ շաա էք դարդ անում, —հանգստացնող եղանակով ասաց հրատարակիչը: —Կուղղէք, կը բացատրէք, թէ այդ ինչպէս է եղել... Անպիտանը շատ խեղկատակն է, գետի՞նը մտնի: Վառարանում դեեր է բնակեցրել, համար Զէ, Աստւած վկայ: Ցցց տալլը մենք նրան ցըց կտանք, բայց փուչը խելօք է և զարթեցնում է գէպի ինքը ինչոր մի... զիտէք—հրատարակիչը զիսից վեր մի չըթմա խփեց մատներով և հայեացքը պցեց առաստաղին:

—Զեղ այդ դուր է դալիս, համ, —սուր ճչաց խմբագիրը:

—Է, ի՞նչ կայ որ: Միթէ ծիծաղելի չէ: Զեղ էլ զորս գու պատւիրեցիր մի լաւ ուտացրեց: Խելօք զլուխ է անիծածը, —և հրատարակիչը հատուցեց խմբագրին նրա գոռոցի տեղը: —Ո՞ր յօդւածի հիման վրայ էք մտաղիր դուք նրան դատի կանչել:

Խմբագրին արագութեամբ մօտեցաւ հրատարակչին:

—Ես նրան դատի չեմ կանչիլ այս: Զեմ կարող ՝, Վասիլիյ Իվանօվիչ որովհետեւ այդ գեերի գործարանատէրն արդար է: Զեր տպարանում՝ սատանան գիտէ թէ ինչեր են կարանում սատանան գիտէ թէ ինչեր են կատարւում, զուք լսել էք: Իսկ մենք... իսկ ես չաշեսնող եմ ձեւանում ձեր շնորհիւ: Նա հազար անգամ արդար է:

—Եւ այն յաւելւածի՞ համար, որ մացրել է ձեր յօդւածի մէջ, —կծու կերպով հարցրեց հրատարակիչը և հեղնանքով սեղմեց շրթունքները:

—Ի՞նչ կայ որ, հէնց զրա՞ համար կլ, այս: Հասկացէք, Վասիլիյ Իվանօվիչ ախը մենք աղատամիտ թերթ ենք...

—Որը տպագրւում է երկու հազար օրինակ, հաշելով ձրիներն ու փոխանակւողները,

չոր կերպով աւելացրեց հրատարակիչը:—Իսկ
մեր ծրագիրն ինն հաղար է ցրում:
—Ե՞, յետո՞յ:

—Ուրիշ ոչինչ:

Խօմբագիրը յուսահատութեամբ թափ
տւաւ ձեռքը և աչքերը մժադնած՝ նորից
սկսեց դահլիճով յետ ու առաջ գնալ:

—Աքանչելի՛ դրութիւն է, —վնախնթաց
նա՝ ուսւերը թօթւելով:—Ինչ որ լնդհանուր մի
յարձակում է: Բոլոր շները մէկի վրայ են թափ-
ել, իսկ այդ մէկի դունչը կապած է: Հա՛ հա: Այդ թշշառական բան-նւորն էլ: 0՝, Աստամծ իմ:

—Ազրէր, թքեցէք գնան, մի՛ յուզւելք ա-
մա, —յանկարծ խորհուրդ տւաւ Վասիլիյ Իվա-
նովիչը՝ բարեհոգութեամբ քմծիծաղելով, կար-
ծես յոզնելով յուզումներից և ընդդիմախօսու-
թիւններից:—Եղածը եղած է, ձեր պատիւն էլ
նորից կվերականգնէք: Այդ աւելի ծիծաղելի է,
քան զրամատիքական:

Նա հաշտութեամբ մէկնեց իր զիրգ ձեռը
խօմբագրին և ուզում էր դահլիճ դուրս գնալ
զրասենեակը:

Յանկարծ զրասենեակը տանող զուոր
բացեց և շեմքին յայտնեց Գիօգգեվը: Նա
գլխարկով էր և մի տեսակ սիրալիրութեամբ
ժպտում էր:

—Ես եկայ ձեզ ասելու, պարո՞ն խմբա-
գիր, որ եթէ դուք ցանկանում էք ինձ գէմ
դատ բանալ, ասացէք, որովհետեւ ես էսաե-
ղից գնալու եմ, իսկ էտապով էլ վերադառնալ
չեմ ուզում:

—Դուրս կորիր, —ձզրթաց խմբագիրը՝
քիչ մնալով որ հեկեկայ և փախաւ սենեակի
խորքը:

—Ուրեմն հաշիւներս վերջացած է, ասաց
Գիօգգեվը, գլխարկին ուզդեց և հանգիստ շուռ
զալով շեմքում՝ անյայտացաւ:

—0՝-օ, սրիկա:—արտասանեց Վասիլիյ
իվանօվիչը հիացմունքով Գիօգգեվի ետեխից և
երանելիօրէն ժպտալով՝ սկսեց կամաց-կամաց
հագնել վերարկուն:

**

Նկարագրած դէսքից երկու օր յետոյ
Գիօգգեվը կապոյտ բլուզով, կաշւէ գօտին կա-
պած, փողքերը վար թողած անդրտվարտիքով,
փայլուն սրբւած կօշիկներով, սպիտակ ծուռ
դրած կարտուզով, խուլխուլոտ փայտը ձեռին,
ծանրումեծօրէն զբօսնում էր «Սարում»:

Սարը ներկայացնում էր դէսկի գետն իշ-
նող մի զառիվայր: Վաղ ժամանակներում այդ
զառիվայրում խիտ անտառ էր բուսած: Այժմ

Համարեա բոլորովին կարտւած էր, և միայն
տեղ-տեղ կորովի, հաստարձատ կազմիներն ու
կնձենիները, որոնք կայծակնահար էին եղել,
ցցել էին դէպի երկինք իրանց հին խոռոշաւոր
բները՝ հանդցյաւոր ճղները լայն փռելով:
Նրանց արմաներից աճած ծատաղ բողբոչները,
թփերը հարւել էին բներին, և ամեն տեղ կա-
նաչոտի մէջ զբօնող ժողովուրդը կոխ էր տւել
ոլորմոլոր շաւիդները, որոնք ցած էին իշնում
դէպի արեի շողերով լցւած գետը: Տորիգոնա-
ձե հատելով «Սարը» գնում էր լայն ճեմելիքը,
փոստի բարձի թօսի արած ճանապարհը—և
այնտեղ էր զլիսաւորապէս զբօնում ժողովուրդը՝
անցուգարձ անելով մի կարգը միւսին հակառակ:

Դիօգեվին միշտ գուր էր զալիս թափա-
ռել այդ ճեմելիքով ետ ու առաջ բազմութեան
հետ և զգալ իրան էլ այնպէս, ինչպէս և՝ բո-
լուրը, նշյալպէս ազատ ծծել սազարթի բուր-
մունքով լցւած օպը, նշյալպէս ազատ և ծոյլ
շարժւել ու լինել մի մասը ինչոր մեծ բանի
և իրան էլ բոլորին հաւասար զգալ:

Այդ օրը նա քիչ քէֆով էր, և նրա
վճռական չեցոտ դէմքը նայում էր բարեկոգու-
թեամբ ու բարեկամանալու հակումով: Նրա
ձախ քունքի վրայից դէպի վեր էին ողորւում
շէկ մազի փնջերը: Ականչին գեղեցիկ կերպով

շւաք անելով՝ նրանք կանգնում էին զիխարկի
շրջանակի վրայ՝ զոչազ արհեստաւորի արի տեսք
տալով Գվօզգեվին, որը գոհ է իրանովի պատ-
րաստ է իսկոյն և եթե երգել պարել ու կրա-
ւել և կարող է խմել, երբ ուղես: Կարծես բնու-
թիւնը կամեցել է նիկոլայ Գվօզգեվին այդ բնու-
րոշ մազի փնջիկներով ներկայացնել ամենքին
իրեւ մի կրակոտ ազայի և իր գինն իմացողի:
Հաւանութեամբ նայելով շուրջը գորշագոյն աչ-
քերով՝ Գվօզգեվը խաղաղասիրաբար բոթում
էր ժողովրդին, առանց տրտնջալու տանում էր
նրանց հրոցները, կանանց շէյֆները կոխելիս՝
քաղաքավարի ներողութիւն էր խնդրում, ա-
մենքի հետ միասին կլանում էր թանձր օդը և
իրան շատ լաւ էր զգում:

Ծառերի սաղարթի արանքով երեսում էր,
թէ ինչպէս գետի միւս կողմում արել մար-
զագետիններից վեր էր քաղում: Երկինքն այն-
տեղ ծիրանի էր, չերմ ու քնքոյշ և մարդուս
քաշում էր այնտեղ, ուր նա իր ծայրը գիպց-
նում էր մարգագետինների մուգ կանաչին: Զլօս-
նողների ոաների տակ էին լնինում նախշուն
ստւերները, և մարդկանց բազմութիւնը կո-
խուառում էր նրանց՝ չնկատելով նրանց զեղեց-
կութիւնը: Ծխախոսի զլանակը գեղեցիկ ձեռվ
դնելով շրթունքների ձախ անկիւնում և ծխի

քուլաները ծոյլ-ծոյլ դուրս հանելով աչ անկիւնով, Գվօղգեվը մտիկ էր անում ժողովրդին, զգալով իր մէջ բուռն յանկութիւն խօսակցելու որեւէ մէկի հետ՝ առաջին մի զցյդ շիշ գարեցուր րեստորանում, որ գտնուում էր «Սարի» տակ: Ոչ մի ծանօթ չէր պատահում, իսկ նոր ծանօթութիւն հաստատելու էլ յարմար առիթ չէր ներկայանում. հաստարակութիւնը՝ չնայած տօնին և գարնանային պայծառ օրին, մի տեսակ մռայլ էր և չէր պատասխանում Գվօղգեվի բարեկամական տրամադրութեանը, թէպէտ նա արդէն մի քանի անգամ իր հետ մի շարքում գնացող մարդկանց դէմքերին նայել էր բարեսիրտ ժպառվ և նրանց հետ խօսակցութիւն սկսելու լիակատար պատրաստակամութեան արտայայտութեամբ: Յանկարծ ծոծրակների բազմութեան մէջ երեւաց նրա աչքին խմբագրի—Դմիտրիյ Պաւլօվիչ իստոմինի՝ նրան լաւ ծանօթ հարթ խուզած և տափակ՝ կարծես տաշած—ծոծրակը: Գվօղգեվը ժպառաց՝ յիշելով, թէ ինչ խաղ խաղաց այդ մարդու զլիխին, և մեծ բաւականութեամբ սկսեց նայել Դմիտրիյ Պաւլօվիչի մոխրագոյն ցած զլիսարկին: Երբեմն խմբագրի զլիսարկը ծածկում էր միւս զլիսարկների ետեւում, և այդ ինչոր պատճառով անհանդստացնում էր

Գվօղգեվին. նա բարձրանում էր ոտների ծայրերի վրայ, վնատրելով այն՝ դտնում էր և նորից ժպառում:

Այդպէս՝ հետեւելով խմբագրին՝ նա գնում էր և յիշում այն ժամանակը, երբ նա—Գվօղգեվը—փականագործի նիկոլկա էր, իսկ խմբագիրը—տիրացուհու Միտ'կա: Նրանք մի Միշկա ընկեր էլ ունեին, որին նրանք նաքարածն էին անւանում: Մի Վաս'կա ժուկով էլ կար, որ փողոցի ծայրի տան մէջ ընակւող աստիճանաւորի որդին էր: Լաւ տուն էր—հին, մամռապատ, ամբողջովին մանր-մունը շինութիւններով պատած: Վաս'կայի հայրը հիանալի աղաւնետուն ունէր: Տան բակում շատ յարմար էր գողլուկանի խաղալ, որովհետեւ Վաս'կայի հայրը ժլատ էր և պահում էր բակում ամեն մի անպէտք իր—ինչպէս օրինակ՝ կոտրաւած կառքեր, տակառներ, արկզներ: Հիմա Վաս'կան դաւառում բժիշկ է, իսկ հին տան տեղը երկաթուղիական ապրանքատներն են գտնուում... Ուրիշ ընկերներ էլ կային, բոլորն էլ ութ-տաս տարեկան երեխաներ: Նրանք ամենքը բնակւում էին այն ժամանակ քաղաքի ծայրում, Յետին Թաց փողոցում. ապրում էին իրար հետ սիրով, իսկ ուրիշ փողոցների երեխաների հետ մշտական թշնամի: Ամայացնում

Էին այդիներն ու բանշարանոյները, վէզի էին տալիս, հոթի էին տալիս և ուրիշ խաղեր էին խաղում, սովորում էին ծխական դպրոցում... Եցի ժամանակից անցել էր քսան տարու չափ...

Կար մի ժամանակ և—անցել էր, կային երեսաներ—նշնալիսի խռովարար ու կեղառա, ինչպէս և փականագործի նիկօլիան, բայց այժմ դարձել էին նշանաւոր մարդիկ: Իսկ փականագործի նիկօլիան խրուած մնաց թետին թաց փողոցում: Նրանք աւարտելով ծխական դրաց՝ մտան զիմազիա, —նա չմտաւ... Բայց ի՞նչ կլինի, որ խօսի խմբազրի հետ: Բարովիլ և խօսակցութիւն սկսել: Նախ և առաջ ներողութիւն խնդրել խայտառակութեան համար և յետոյ խօսակցել—այնպէս, ընդհանրապէս, կեանքի մասին...

Խմբազրի զլխարկն անդադար Գվօղդեվի աչքովն էր ընկնում՝ ասես նրան կանչելով դէպի ինքը, և Գվօղդեվը սիրու արաւ: Հենց այդ ժամանակ խմբազրը մենակ անցնում էր մի ազատ տեղով, որ զյացել էր հասարակութեան միջում: Նա քայլում էր բայց զյնի անդրավարտիք հագած իր բարակ ոսներով, զլուխն անդադար պտտուում էր մի կողմից միւս կողմ, կարձատես աչքերը հասարակութիւնը զիտելիս կոցուում էին: Գվօղդեվը համարեա հա-

ւասարւեց նրան և կողքից սիրալիր կերպով ձտիկ էր տալիս նրա գէճքին՝ սպասելով յարձար բուլէի, որ բարովի, և միւնցն ժամանակ սաստիկ ցանկութիւն զգալով իմանալու, թէ սաստիկ ցանկութիւն զգալով իմանալու, թէ խմբազրն ինչպէս կը վերաբերւի դէպի նա: —Բարովի, Միարիյ Պաւլօվիչ:

Խմբազրիր դարձաւ դէպի նա, մի ձեռով բարձրացրեց զլխարկը, միւսով քթի վրայ ուղեց ակնոցները, զիտեց Գվօղդեվին և խոժուուեց:

Բայց այդ շփոթեցրեց նիկօլայ Գվօղդեվին,—ընդհակառակն նա ամենադուրեկան ձեզին, զարդարութիւն սկսել: Նախ և առաջ ներողութիւն խնդրել խայտառակութեան համար վիճելով՝ հարցրեց.

—Զրօննում էք:

Խմբազրը մի վայրկեան կանդ առաւ, նրա շրթունքներն ու ռունգները զգւանքով դուշացին, և նա սառնօրէն ասաց Գվօղդեվին:

—Ի՞նչ էք ուզում:

—Ե՞ս: Ոչինչ: Ես հենց էնպէս... էսօր լաւ է: Եւ ես շատ ցանկանում եմ ձեզ հինգ խօսել էն դէպիքի ասիթով:

—Ես չեմ կամենում ձեզ հետ ոչ մի բանի մասին խօսել, —յայտնեց խմբազրը՝ քայլերն արագացնելով:

Գվօղդեվը նոյնն արաւ:

—Զէք ցանկանում: Հասկանում եմ... Պուը

իրաւունք ունեք, ես այդ շատ լաւ եմ հասկանում... որովհետեւ ես ձեզ վիրաւորել եմ, ուստի՝ իշարկէ՝ դուք պէտք է որ ինձ վրայ բարկացած լինեք...

— Դուք ուղղակի... դուք հարբած էք...
— Նորից կանդ առաւ խմբադիրը: — Եւ եթէ դուք հանգիստ չէք թողնիլ, ես ոսափկանութիւն կհրաւիրեմ:

Գվօղգեվր սիրալիր ծիծաղեց:

— Է՛, ինչի՞ համար ախր:

Խմբագիրը խէթ-խէթ նայեց նրան մի այնպիսի մարդու թախծոտ հայեացքով, որն ընկնում է անախորժ զրութեան մէջ և զգիտէ, թէ ինչպէս դուրս գայ: Հասարակութիւնն արդէն նայում էր նրանց հետաքրքրութեամբ: Մի քանի գէմքեր ուշադրութիւն դարձրին՝ զգալով սկսող խայտառակութիւնը: Խստոմինն անզօր նայում էր շուրջը:

Գվօղգեկն այդ նկատեց:

— Եկէք մի կողմ ծառենք, — ասաց նա, — և չսպասելով համաձայնութեան՝ ուսովին արագութեամբ քշեց իստոմինին լայն ծառուղուց նեղ շաւիզը, որ թփերի միջով իշնում էր սարից ներքեւ:

Խմբագիրն այդ մանէովրի գէմբողոք չյայտնեց, — գուցէ այն պատճառով, որ ժամանակ

չունեցաւ, բայց գուցէ և այն պատճառով, որ հասարակութիւնից գուրս, մէն-մենակ յօյս ունէր շուտ և հեշտ աղատւել իր զրուցընկերից: Նա հանգարա, զգոյշ գէմ տալով փայտը գետնին՝ զնում էր շաւզով ցած, իսկ Գվօղգեվր հետեւում էր նրան և ծնչում նրա զիսարկի վրայ: — Այս այստեղ մօտիկ մի զորուած ծառկայ, նրա վրայ կնստենք... Դուք, Միտրիկ Պալօվիչ, մի՛ բարկանաք վրաս իմ արարքի համար: Ներեցէք: Ախր ես չարացած էի... Բանւորականի սրտում երբեմն էնպիսի չարութիւն է վառւում, որ զինով էլ չի կարելի հանգնել... Է՛, էղպէս ժամանակ էլ մէկի հետ կռիւ ես զցում. կամ որևէ անցորդի ուեխն ես ծեփում, կամ մի ուրիշ բան... Ես չեմ զցում — ինչ եղել է, եղել է, բայց գուցէ ես մինչեւ անգամ շատ լաւ հասկանում եմ, որ չափից դուրս եմ արել... Սահմանից անցել եմ:

Արգեօք զգացւել տւաւ խմբագրին այդ անկեղծ բացատրութիւնը, և Գվօղգեվի անձնաւորութիւնը նրա մէջ հետաքրքրութիւն զարթեցրեց, թէ՞ նա հասկացաւ, որ այդ մարդու ձեռից չի աղատւելու, բայց և այնպէս նա հարցրեց Գվօղգեվին.

— Ինչի՞ մասին էք ուզում խօսել:

— Հինգ էնպէս.... ամեն բանի մասին: Վշ-

տանում է հոդիս, որովհետեւ ևս ինձ զրկւած եմ զգում... Այ էստեղ նստենք:

— Ես ժամանակ չունեմ...

— Ես գիտեմ... թե՛րթը: Նա ձեր կեանքի կեսը կմաշի, ձեր բոլոր առողջութիւնը նրա վրայ կվատնեք: Զի՞ որ ես հասկանում եմ: Իսկ նա, հրատարակիչը, նրան ինչ: Լրագիրը նրա համար փող է, իսկ ձեզ համար արիւն: Արդէն ձեր աչքերն էլ փչացրել էք զրելով... նստեցէք:

Նրանց առաջ շաւզում ընկած էր մի մեծ կոճղ—երբեմն հսկայ կաղնու կիսափուտ ֆնացորդը: Ընկուզէնու ձիւղերը կռացել էին ծառի վրայ՝ կազմելով կանաչ ծածկոց: Ճղների արանքով նշմարւում էր երկինքը, որ արդէւ պատել էր արեւմուտքի գցներով: Թարմ սաղարթի ախորժ բոյրով լցւել էր օղը: Գվօղդեվլ նստեց և զառնալով խմբագրին, որը դեռ կանդնած էր՝ երկմառւթեամբ շուրջը նայելիս, նորից խօսեց:

— Ես էսօր քիչ եմ խմել... Զանձրայել եմ ապրելոց, Միտրի Պաւովիչ: Իմ ընկեր բանւորներից ես ևտ եմ մնացել կարծես, իմ մաքի ուղղութիւնը բոլորովին ուրիշ է: Զեղ էսօր տեսայ ու յիշեցի, որ ախր դուք էլ իմ ընկերն էիր... հա հա:

Նա ծիծաղեց, որովհետեւ խմբագիրը նրան նայում էր դէմքի արս: Այսպատութիւնների այնպիսի արագ փոփոխութեամբ, որը նրան իսկապէս ծիծաղելի էր դարձնում:

— Բնկե՞ր: Ե՞րբ:

— Վաղուցւայ բան է, Միտրի Պաւովիչ... Էն ժամանակ դեռ մենք Յեախն թուցիչ... Էն ժամանակ դեռ մենք Յեախն թուցիչ... Եինք կենք կենում... Յիշում էք: Մի բակ էր միայն բաժանում մեզ: Իսկ մեր դէմուդէծ Միշկա Շաքտրածանն էր—այժմեան ժամանակ Միխայիլ Եֆիմօվիչ Խրուլեկի, դատասահական քննիչ—որ բարեհածում էր բնակութիւն հաստատած լինել իր խիստ հօր մօտ... Յիշում էք Եֆիմօվիչին: Նա շատ անդամ է իմ ու ձեր մագերից քաշել... Բայց դուք նստեցէք:

Խմբակիրը դրականապէս զիխով արաւ և նստեց Գվօղդեվի կողքին: Նա նայում էր նրան այնպիսի մի մարդու լարւած հայացքով, որ յիշում է ինչ-որ վաղուց և բոլորովին մոռացւած բան, և շփում էր ձակատը:

Իսկ Գվօղդեվը աարւում էր յուշերով:

— Ի՞նչ կեանք էր էն ժամանակ: Եւ ինչո՞ւ մարդս իր ամբողջ կեանքում երեխայ չի մնում: Մեծանում է... ինչո՞ւ: Յեայ հող է մանում: Իր ողջ կեանքում զանազան դժբախտութիւններ է կրում... չարանում, գաղանա-

նում... անշեթեթ բան է: Ապրում է, ապ-
րում և—վերջիվերջը յիմար բան է գուրս գա-
լիս... Դադաղ և... ուրիշ ոչինչ... իսկ էն ժա-
մանակ մենք ինչպէս ապրում էինք առանց
որևէ մութ մաքի, ուրախ, իսկեւսի թռչուն-
ների՝ պէս: Յանկապատերով ցատկում էինք
ուրիշների աշխատանքի պառողները գողանա-
լու... Յիշում էք, մի անդամ Պետրօվնայի բան-
շարանցում գողութեան մէջ ես մի վարունկ
հասցրի ձեր քթին: Դուք աղաղակ բարձրաց-
րիք, բայց ևս պոկ եկայ... Դուք ձեր մօր հետ
եկաք հօրս մօտ գանգատ, ու հերս ինձ քոթ-
կեց ինչպէս հարկն է... իսկ Միշկան, Միխայիլ
Եֆիմօվիչը...

Խմբագիրը լսում էր և ակամայ ժպառմ:
Նա կուզէր լրջութիւնն ու արժանիքը պահ-
պանել այդ ծարդու առաջ, որ հակում էր ցցյց
տալիս դէպի ընկերական մօտիկ վերաբերմունք.
Բայց մաքուր օրերի մասին այդ պատմութիւն-
ներում կար ինչ որ սրաւարձ բան, և Գիօր-
գեվի խօսակցութեան ձեի մէջ զեռ այնպէս
սուր կերպով չէին հնչում նօտեր, որոնք վիրա-
ւորել սպառնացին Դմիտրիյ Պալօվիչի ինքնա-
սիրութիւնը: Չորս կողմն էլ ասենք լաւ էր:
Բարձրում զբանող հասարակութեան ոտները
քսում էին ճանապարհի աւազին, խուլ ձայ-

ներ էին գալիս, երեւմն հնչում էր ծիծաղը.
Բայց հառաջում էր քամին—և այդ բոլոր թշլ
հնչիւնները մարում էին սաղարթի մելամաղ-
ձոտ շրշիւնի մէջ: Իսկ երբ շրշիւնը լռում էր,
խորին խաղաղութեան վայրկեաններ էին լի-
նում, չորս կողմը կարծես ամեն բան ուշ էր
գնում նիկօլայ Գիօրգեվի խօսքերին, որը կց-
կտուր կերպով պատմում էր երիտասարդու-
թեան պատմութիւնը...

— Յիշում էր Վար'կային, ներկարար Կո-
լոկոլ'ցեի աղջկան: Հիմի նա մարդու է զնացել
տպարանատէր Շապօնիկօվին: Էնալիսի՞ խանըմ
է—մօտով անցնել չի լինում... Էն ժամանակ
նա մի հիւանդու փոքրիկ աղջիկ էր... Յիշում
էք, նա մի անդամ կորաւ, և մեր փողոցի բո-
լոր երեխաններս զնացինք որոնելու նրան դաշ-
տում ու ձորերում! Զօրաբանակում գտանք և
դաշտի միջով տուն բերինք... Որքան աղմուկ
բարձրացաւ: Կոլոկոլ'ցեր մեզ շաքարահացով
հիւրասիրեց, իսկ Վար'կան իր մօրը տեսնելով
ասաց. «Ես մի սպայի տիկնոջ մօտ էի, և նա
ինձ ուզում է իրան աղջկացու վերցնել!» Հէ-Հէ...
Աղջկացու վերցնել... Հիանալի փոքրիկ աղջիկ էր...

Գետից համում էին ինչ-որ հնչիւններ,—
կարծես մեղմ հառաջում էր մէկի կարող, թախ-
ձոտ կուրծքը: Շոգենաւը գնում էր, և օդում

լողում էր շրի ազմուկը, որը ճեղբւռում էր նրանիւներով: Երկինքը վարդագյն էր, իսկ Գվօղդեկի ու խմբագրի շուրջը խտանում էր խաւարը: Դանդաղօրէն վրայ էր հասնում գտրնանային գիշերը: Խողաղութիւնը դառնում էր կատարեալ, խորին, և Գվօղդեկը կարծեսնրան ենթարկելով՝ իշեցրեց ձայնը... Խմբագիրը լուռ լսում էր նրան՝ իր յիշողութեան մէջ վերարտագրելով վաղ անցեալի աղօտ պատկերները: Այդ բոլորը եղել էր... Եւ այդ բոլորն աւելի լաւ էր, քան այժմ: Միայն մանուկ հաստկում է հնարաւոր ունենալ աղատ հոգի, որ չէ նկատում այն շղթաների ծանրութիւնը, որոնք կոչւում են կեանքի պայմաններ: Մանկութեանն անծանօթ են խղձի սուր բորբոքումները, շատ կեղծիքներ ել ծանօթ չեն՝ բացի մանկական անվնասակար ստից: Մանկութեան օրերում որքան շատ բան կայ անյայտ, և ինչպէս լաւ է այդ անյայտութիւնը: Ապրում ես—աստիճանաբար ընդարձակւում է կեանքի մասին ունեցած հասկացողութիւնը... Ինչո՞ւ է այն լայնանում, քանի որ մեռնում ես՝ դեռ ոչինչ հասկացած:

— Եղանքս ուրեմն, Միարիյ Պաւլօվիչ, բանից դուրս է դալիս, որ ես ու դուք միենցն պարտիզի ծաղիկներ ենք... այս: Բայց մեր հո-

տերը զանազան են..., Եւ հենց որ յիշում եմ, որ իմ և իմ մի ժամանակւայ ընկերներիս մէջ եղած բոլոր տարբերութիւնը նրանումն է միայն, որ ես գիմնազիայում չեմ սովորել,—դառն է թւում ինձ կեանքը և վատ... Միթէ՞ մարդութիւնը գրանում է: Մարդութիւնը հոգումն է, գէափի իր մերձաւորն ունեցած զգացմունքների մէջն է, ինչպէս ասւած է... Բայց տեսէք—դուք իմ մերձաւորն էք, բայց ես ի՞նչ զին ունիմ ձեր ազքում: Ո՛չ մի, — Ճշմարի՞տ է:

Խմբագիրն իր մաքերով տարւած՝ չմեց երեխի իր զրուցընկերի հարցը:

— Ճշմարի՞տ է, — ասաց նա անկեղծ ուցրւած տռնով:

Բայց Գվօղդեկը ծիծաղեց, և նա ուշքի եկաւ:

— Այսինքն, սպասեցէք: Ի՞նչն է իսկապէս Ճշմարիտը:

— Են, որ ես ձեզ համար մի աւելորդ բան եմ... Կամ ես, թէ չէ, զա միենցնն է ձեզ համար, — ձեր հոգը չէ: Ձեր ինչի՞ն է հարկաւոր իմ հոգին: Մենակ ես ապրում եմ աշխարհում և ինձ ճանաչող բոլոր մարդկանց ձանձրացէլ եմ: Դրա համար էլ իմ բնաւորութիւնը չար է, և ես շատ եմ սիրում գանազան օյին բազութիւններ անել: Բայց ախր ես էլ զգաց-

մունք ունիմ, խելք էլ ունիմ... Ես ինձ զրկւած եմ զգում իմ դրութեան մէջ: Ես ձեզանից ինչով եմ վատ: Միայն իմ պարապմունքով...

— Ա-այս, այդ ցաւալի՛ է,— ասաց խմբագիրը Ճակատը կնճռելով, լրութիւն պահպանեց և շարունակեց մի տեսակ հանգստացուցիչ եղանակով: — Բայց դիտեք, այդտեղ պէտք է վերցնել ուրիշ տեսակետ...

— Միտրիյ Պաւլօվիչ: Տեսակէտի ի՞նչ կարիք կայ: Ոչ թէ որեւէ տեսակէտից պէտք է մարդը մարդուն նշանակութիւն տայ, այլ որտեղ լազարածի համեմատ: Ի՞նչ բան է տեսակէտը: Ես խօսում եմ կեանքի անարդարութեան մասին: Միթէ՞ կարելի է ինձ որեւէ տեսակէտից անպէտք համարել: Բայց ևս անպէտք եմ համարւած կեանքում—նրանսւմ ինձ տեղ չեն առլիս... Ինչու-ը: Որովհետեւ կարդացած չեմ: Բայց ախր եթէ դուք ուսումնականներդ ոչ թէ որեւէ տեսակէտը դատէիք, այլ մի ուրիշ կերպ, պարտաւոր էք ինձ—ձեր խմբին պատկանողիս չմոռանալ և ձեզ մօտ բարձրացնել ներքելոյ, ուր ևս փթում եմ ազիտութեան և իմ զզացմունքների չարութեան մէջ: Կամ գուցէ որևէ հայեցակէտից պարաւոր չէք:

Գլողգեվը կկոցեց աշքը և յաղթութեան հրձւանքով նայեց իր խօսակցի դէմքին: Նա

իրան զգում էր լեզուն բացւած և արտաքիրում էր իր միջից իր ամրող փիլիսոփայութիւնը, որ խորհել էր իր վաստակաւոր, անփոյթ ու անպտուղ կետնը երկար տարիներում: Խմբագիրը շփոթւած էր զրուցընկերի յարձակումով և աշխատում էր միաժամանակ որոշել, թէ այդ ինչ մարդ է, և թէ նա ինչ պատասխանէ նրա խօսքերին: Իսկ Գլողգեվը ինքնի իրանով հարբած՝ շարունակեց:

— Դուք խելօք մարդիկ էք, ինձ հարիւր պատասխան կտաք, և բոլորն էլ կլինի—ոչ, պարտաւոր չենք: — Իսկ ես ասում եմ—պարտաւոր էք: Ինչու: Որովհետեւ ես ու դուք մի փողոցում բնակող մարդիկ ենք և նոյն ծագութն ունինք... Դուք կեանքի իսկական տէրերը չէք, ազնւականներ չէք... Նրանք մեզ պէսներին կարող են հռավ տալ կուլ տալ: Նրանք որ ասեն: « Զաննամը գնա դու էլ կդնաս: Որովհետեւ նրանք — Հնուց արխատօկրատներ են, իսկ դուք նրա համար էք արխատօկրատ, որ քերականութիւն դիտէք և այլն... Բայց դուք—մերոնցից էք, և ես կարող եմ ձեզանից պահանջել, որ ցցց տաք ինձ իմ կեանքի ուղին: Ես մէշանին եմ, Խրուկեվը էլ նոյնպէս, դուք էլ—տիրացուի որդի էք...»

— Բայց թոյլ տւէք, — ինդրանքով ասաց

խմբագիրը, — միթէ ես բացասում եմ ձեր պահանջելու իրաւունքը...

Բայց Գվօղգեվը բոլորովին չէր հետաքրքրուում, թէ ինչ է բացասում և ինչ է ընդունում խմբագիրը. նա կտրիք էր զգում արտայայտել իր միտքը, և նա զգում էր իրան այդ մօմենտին ընդունակ ասելու այն բոլորն, ինչ որ երբեքցէ նրան յուղել է:

— Ոչ գուշը թշյլ տւէք, — արգէն մի տեսակ խորհրդաւոր շշուկով ասում էր նա՝ մօտիկ կոանալով դէպի խմբագիրը և վրդովւած աչքերը փայլեցնելով: Ինչպէ՞ս էք կարծում, հէ՞շտ է բանել իմ էն ընկերների համար, որոնց ըթերն էի ջարդուում մի ժամանակ: Հե՞շտ բան է ինձ համար պարզն զատաստանական քննիչ Խրուլելից, որի արտաքնոյը մօա մի տարի առաջ շինեցի, քառասուն կոպէկ ստանալ թէյգին: Չէ՞ որ նա միւննոյն շրջանի մարդ է, ինչ որ ես... Եւ նրա անունն էլ Միշկա Շաբարաման էր... նրա ատամները փթած են հէնց հիմայ էլ, ինչպէս էն ժամանակ էին...

Նրա կոկորդին ինչ-որ ծանր, խեղդող բան գէմ ընկաւ. նա լռեց մի վայրկեան և ապա սկսեց յիշոցներ տալ — այնպէս բարձր ու զգւելիցինիկ, որ խմբագիրը յնցւեց և յետ քաշւեց նրանից: Հայհոյելով՝ Գվօղգեվը յանկարծ մի

տեսակ թռուլացաւ, ասես կրակը հանդաւ նրա մէջ: Նա ինքն իրան ականջ դրաւ և այլես չգտաւ իր ներսում այնպիսի բան, որ նա ցանկանար ասել:

— Վերջացրի ամեն ինչ — խուլ արտասահնեց նա:

Յանկարծ նրա հոգում մի գատարկութիւն գոյացաւ, և գատարկութեան այդ զգացումը նրան զրգուում էր:

Խմբագիրը խոհուն հայեացը ով նայում էր նրան կողքից և լուռ պատկերացնում, թէ ի՞նչ ասել այդ տղային: Պէտք էր մի լաւ, ծշմարիտ և անկեղծ բան ասել: Բայց ներկայ վայրկեանին ոչ մի պէտքական բան չգտնեց Դմիտրիյ Պավլովիչ իստօմինի ոչ զլիսում, ոչ սրտում: Վաղուց արգէն բոլոր իդէական և վսեմ խօսակցութիւնները «Հարցերի» մասին՝ առաջ էին բերում նրա մէջ ձանձրոյթի և յոգնածութեան զգացում: Նա այսօր դուրս էր եկել հանդատանալու, գիտմամբ խուսափում էր ծանօթներին հանդիպելուց, և յանկարծ լոյս ընկաւ այդ մարդն իր ձառերով: Իհարկէ՝ նրա խօսքերում, որպէս և մարդկանց ասած բոլոր բաներում՝ կայ ծշմարտութեան որոշ մաս: Այդ խօսքերը հետաքրքիր են և կարող էին ֆելքեաօնի համար իբրև շատ հետաքրքիր թեմա ծառայել...

Բայց այնուամենայնիւ պէտք է ախր մի որեւ
բան ասել նրան:

— Այն բոլորն, ինչ որ դուք ասացիք —
նոր չէ, գիտէք — սկսեց նա: — Մարդու դէպի
մարդն ունեցած յարաբերութիւնների անար-
դարութեան մասին վաղուց է խօսւում... Բայց
և այնպէս ձեր այդ խօսքերը նորութիւն են,
ներկայացնում այն մտքով, որ առաջ ասել են
ուրիշ տեսակի մարդիկ... Դուք միակողմանի
և անձիշտ էք ձեւակերպում ձեր խոհերը...
բայց...

— Կրկին ձեր հայեցակէտը, — թոյլ-թոյլ
քմծիծաղեց Գվօղդեվը: — Հայ-հայ, պարոններ,
պարոններ: Չեղ խելք պարզեռուած է, բայց ձեր
սիրտը երեխ մեռած է... Դուք ինձ մի էնալիսի
բան ասացէք, որ միանդամից սրտով լի-
նի... հա:

Նա այս ասաց և զլուխը խոնարհելով՝ պա-
տասխանի էր սպասում: Նրան տիրել էր թա-
խիծը:

Իստոմինը նորից նայեց նրան՝ ճակարը
կնճռելով և հեռանալու սաստիկ յանկութիւն
զգալով: Նրան թւաց, թէ Գվօղդեվ հարբում
է, այդ պատճառովէ այնպէս թթւել իր վրդով-
ւած խօսքերից յետոյ: Նա նայեց Գվօղդեվի
սպիտակ զլխարկին, որ իշել էր ծոծրամկի վրայ,

չեզու թշին և ցցւած մաղի փնջին, հայեաց-
քով չափեց նրա ամբողջ ուժեղ զրոտ արտա-
քինը և մտածեց նրա մասին, որ նա շատ տի-
պիք բանուոր է և եթէ որ...

— Հը, ի՞նչ եղաւ, — հարցրեց Գվօղդեվը:

— Ե՛, ես ի՞նչ կարող եմ ասել ձեզ: Պարզ
ասեմ, ես շատ էլ որոշ չեմ կարողանում երե-
ւակայել, թէ դուք իսկապէս ի՞նչ կ'ուզէիք լսել:

— Բանն էլ հէնց էդ է... Դուք ինձ ոչինչ
չեք կարող պատասխանել, — քմծիծաղեց Գվօղ-
դեվը:

Խմբաղիրը թեթեացած շունչքաշեց՝ հա-
ւանօրէն ենթագրելով, որ խօսակցութիւնը վեր-
ջացած է, Գվօղդեվը այլևս նրա եախից չէ կալչե-
լու իր հարցերով... Եւ յանկարծ նա մտածեց.

— Իսկ եթէ նա ինձ ծեծի: Նա այնպէս
չար է:

Նու յիշեց Գվօղդեվի դէմքի արտայայտու-
թիւնն այնտեղ, խմբաղրատանը, այն անմիտ
տեսարանի ժամանակ: Եւ նա կասկածանքով
խէթ-խէթ նայեց նրա վրայ:

Արդէն մութ էր: Խաղաղութիւնը վրդով-
ւում էր հեռու — զետից լաւող երգի հնչւնե-
րով: Երդում էին խմբովին և տեսօր հնայները
լուսում էին բոլորովին որոշ: Մեծ-մեծ բգէզները
մետաղանման զնդացնելով՝ թռչում էին օգում:

Ծառերի սաղարթի արանքով երևում էին աստղերը... Երբեմն այս կամ այն ճիւղը գլխների վրայ ինչ-որ պատճառով ցնցում էր, լուսում էր տերեների մեջ սոսաւիւնը:

—Կարծեմ յօղ կլինի...—ասաց խմբագիրն զգուշութեամբ:

Գլողգելը ցնցւեց և երեսը դարձրեց դէպի նա:—Ի՞նչ ասացիք դուք:—Ցող է լինելու, ասում եմ, վասակար է այլ...

—Ա-ա-ա:

Գիշ լուս մնացին: Գետի վրայ հսկեց. —Է՛կ՛յ: Բարժի վրայ է...—Ես ուզում եմ գնալ: Յառեսութիւն...—Մի զարկ չեց գարեջուր չխմնը, —առաջարկեց յանկարծ Գլողգելը և քմծիծաղելով աւելացրեց, —Պատիւ արէք:

—Ո՞չ ներեցէք, ես այս ժամանակ չեմ կարող: Եւ յետոյ՝ ժամանակ է ինձ, զիտէք...
Գլողգելը վեր կացաւ կոճղից և խստութեամբ նայեց խմբագրին:

Վերշինս ձեռքը նրան մեկնեց՝ նոյնպէս վեր կենալով:

—Զէ՞ք ցանկանում ուրեմն ինձ հետ դարեջուր խմել: Դէ՞հ, չհանամը գնացէք, —վճռականապէս ասաց Գլողգելը՝ կտրուկ շարժու-

մով իր զինարկը թեքելով:—Արիստօկրանտիա: Ջուխով մի գրօշ է! Ես մենակ էլ կսմեմ:

Խօթագիրն արիութեամբ մշքը դարձրեց դէպի իր խօսակիցը և շաւզով վեր գնաց՝ ոչ մի խօսք չասելով: Գիզզելի մօտով անցնելիս՝ նա տարօրէն զուխն ուսերը քաշեց, ասես վախենում էր նրա որևէ բանին դիպչել: Գիզզելը խոշորը քայլերով ուզգւեց սարից վայր:

Գետից լուսում էր ճղթող ձայնը.

—Բարժի վրա-այ է: Սատանանե-եր: Նաւա-ա-կը տու-ու-ու-ուր:

Եւ ծառերի մէջ արածում էր մեղմ արձագանգը.

—Օ-ու-ու-ու-ու...



նույնականացնելու գործը պահանջ է ունենալ
ուղարկելով ի ֆունկտ ու ուշում մաս
անձնաց բարեփակած մասնակիութեան և
ի համար ուղարկութեան ազգային ու պար
ավագանութեան անդամութեան գործութեան մեջ
ու ուղարկելու պահանջութեան մեջ պարագան
ուղարկութեան անդամութեան ազգային
ու պարագան ուղարկելու պահանջ ու պարագան
ուղարկելու պահանջութեան գործութեան մեջ
ու ուղարկելու պահանջութեան գործութեան մեջ

ուղարկելու պահանջութեան գործութեան մեջ

— Եթե Ուղարկութեան գործութեան մեջ
ուղարկելու պահանջութեան գործութեան մեջ
ուղարկելու պահանջութեան գործութեան մեջ
ուղարկելու պահանջութեան գործութեան մեջ

ուղարկելու պահանջութեան գործութեան մեջ

— Եթե Ուղարկելու պահանջութեան գործութեան մեջ

— Եթե Ուղարկելու պահանջութեան գործութեան մեջ

— Եթե Ուղարկելու պահանջութեան գործութեան մեջ

ՀՀ Ազգային գրադարան



NL0317645

10.768

9360

5-00

